ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշտարակ 2017թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է: Այգեգործության զարգացման հիմական մարտահրավերը ոռոգման ջուրն է: Սա նկատելի է այգեգործական բոլոր համայնքներում: Որոշ դեպքերում կարիք կա ոռոգման նոր ջրագծերի կառուցման, որոշ համայնքներում՝ ոռոգման ներքին ցանցի վերանորոգման, իսկ բոլոր դեպքերում՝ ջրի անխափան մատակարարման խնդիր: Ներկայում այգիները զբաղեցնում են **8300 հա** տարածք, ապահովելով շուրջ **10 մլրդ** դրամի եկամուտ ավելի քան **4750** գյուղացիական տնտեսությունների: Ոռոգման ջրի հիմնահարցի լուծման և նոր խողովակաշարերի կառուցման դեպքում այս ցուցանիշները կարող են եռապատկվել: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված ցուցանիշը ապահովելու համար մեզ անհրաժեշտ է մոտ **200 կմ** նոր ջրագիծ, մոտ **2000 կմ** ներքին ցանցի վերանորոգում, **5** նոր ամբարտակ Արագածի լանջերին, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման կառավարման մեխանիզմների բարելավում:

Մարզի համայնքների մյուս մասը հայտնի է անասնապահությամբ: Անասունների գլխաքանակը տարեցտարի աճում է: 2015 թվականին ԽԵԱ- ի գլխաքանակը կազմել է **84200** գլուխ, իսկ 2016- ին՝ **87367** գլուխ, մանրինը՝ 2015- ին **93941** գլուխ, իսկ 2016- ին՝ **101065** գլուխ: Լեռնային արոտավայրերի ու խոտհարքերի տարածքը, կերային մշակաբույսերի աճեցման հնարավորությունները, սպանդանոցի առկայությունը նպաստում են անասնպահության զարգացմանը: Այսուհանդերձ, անասնապահության զարգացման համար առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը մեր և ՏԻՄ- երի ուշադրության կենտրոնում է՝ կաթի գնի տատանումները և մթերումը, անասնակերի բազայի ապահովումը, անասնաբուժական որակյալ ծառայությունների մատուցումն ու արհեստական սերմնավորումը, հեռագնա արոտների վիճակն ու ջրի առկայությունը, անասնապահության մեխանիզացիան և այլն:

Մարզի գյուղատնտեսության մյուս էական ուղղությունը հացահատիկային կուլտուրաների արտադրությունն է: 2016- ին մշակվել է մոտ **44 100** հա վարելահող, որը 2015- ի նկատմամբ աճել է 11 տոկոսով: Վարելահողերի որակն ու հսկայական տարածքները նպաստում են հացահատիկային կուլտուրաների մշակման զարգացմանը: Այս ոլորտում հիմնական երեք խնդիր կա մեր ուշադրության կենտրոնում՝ մեխանիզացիան հին է, ունենում ենք բերքի կորուստ, ոռոգման ջրի առկայությունը կարող է կրկնապատկել բերքատվությունը և տարերեյին աղետները:

Համախառն գյուղատնտեսական արտադրանքի ծավալը 2016 թվականի ընթացքում կազմել է՝ շուրջ **88.5** մլրդ դրամ, որը կազմել է հանրապետությունում գյուղատնտեսական համախառն արտադրանքի **9.8%**-ը:

2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար մարզին հատկացված քանակությունից մարզ է ներկրվել մեկ պարկը **6000** ՀՀ դրամով **2622.35** տոննա ազոտական, **7000** ՀՀ դրամով **25.85** տոննա կալիումական և **28.1** տոննա ֆոսֆորական պարարտանյութեր, ինչպես նաև մեկ լիտրը **280** ՀՀ դրամով **176.464** լիտր դիզելային

վառելանյութ: ՀՀ գյուղատնտեսության նախարարություն մարզի կողմից ներկայացված հայտի համաձայն գարնանը՝ մարզին հատկացված քանակություններից մարզ է ներկրվել **132.736** տոննա գարնանացան գարու, **1.8297** տոննա առվույտի, **17.9642** տոննա կորնգանի սերմացուներ: Վարչության կողմից վերահսկվել է սերմացուների,պարարտանյութերի և դիզ. վառելիքի ստացման և բաշխման գործընթացը :

Մարզի **78** համայնքներին անվճար տրվել է **1289կգ** <<Ռոդիֆակում Ս>> տեսակի մկնասպան թունանյութ, որով պայքար է տարվել **16100** հա տարածքներում: Համակարգել է մարզում առկա անասնագլխաքանակի պետ. պատվերի շրջանակներում կատարվող պատվաստումների իրականացումը:

Գյուղացիական տնտեսությունների հետ բացատրական աշխատանքներ է տարվել ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 14-ի արձանագրային որոշման համաձայն գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի վերաբերյալ: Ընթացիկ տարում մարզի **1797** հողոգտագործողներին գյուղատնտեսական վարկեր են տրամադրվել **2.136մլրդ** ՀՀ դրամի չափով, որից **669.9** մլն դրամ սուբսիդավորված վարկերը տրվել են **751** շահառուի: Գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման լիզինգային նոր եղանակը կնպաստի մարզի գյուղատնտեսական տեխնիկայի պարկի համալրմանը:

Սահմանված կարգով մարզի ջրահավաք ավազանների նկատմամբ իրականացվել է հսկողություն: Պարբերաբար քննարկումներ են անցկացվել ոռոգման ջրի տրման, ոռոգման ժամանակացույցի պահպանման և վարձավճարների հավաքագրման վերաբերյալ:

Ընթացք է տրվել քաղաքացիներից ստացված դիմում բողոքներին, կատարել է իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

Բնապահպանություն

Մարզի հանքավայրերը շահագործվում են թվով 34 կազմակերպությունների կողմից, որոնց օրինականության վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակ տեղեկատվություն է տրամադրվում համապատասխան գերատեսչություններին:

Արագածոտնի զարգացման մյուս էական ուղղությունը տուրիզմն է: Ունենալով հսկայական պատմական, կրոնական ժառանգություն, բնական հուշարձաններ ու մարդկային ներուժ՝ մարզը բավարար ներկայացվածություն չունի Հայաստանի տուրիստական երթուղիների մեջ: Մեր պլաններում է Աշտարակի՝ որպես տուրիստական կենտրոնի կայացումը, հիմնական դիտարժան վայրերի ենթակառուցվածքների բերալավումն ու կառուցումը, տուրիստական բիզնեսների կայացմանն օժանդակությունը, ինչպես նաև մարզի այլ տուրիստական օբյեկտների ներառումը առաջիկա ծրագրերում՝ Քասաղ գետի կիրճը՝ իր վանքային համալիրներով, դեպի Արագածի գագաթներ արկածային տուրիզմի զարգացումը, Բյուրականում գիտական տուրիզմի զարգացումը և այլն:

Մարզում զարգանում է նաև վերամշակող արդյունաբերությունը: Անցյալ և այս տարվա ընթացքում ներդրում են կատարվել նոր թռչնաբուծարանի և խոզաբուծարանի գործարկման, կաթնամթերքի վերամշակման, ջերմոցային բազմաթիվ տնտեսությունների, գինեգործության և այլ ոլորտներում: Համախառն արդյունաբերական արտադրանքի ծավալը 2016թ.-ի ընթացքում

կազմել է՝ շուրջ **39.459** մլրդ դրամ, որը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի **2.8%**-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է **13.7** մլրդ դրամ կամ **53.4%**:

Ներդրումային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն

2017 թվականի դրությամբ մարզի համայնքների և մասնավոր ներդրողների կողմից շարունակվում են մարզպետարան ներկայացվել ներդրումային ծրագրերի հայտեր, ներկայումս ընթանում են այդ ծրագրերի ուսումնասիրության աշխատանքները: ՀՀ կառավարություն է ներկայացվել 10-ից ավելի ներդրումային ծրագիր, որոնց մի մասն արդեն իսկ ամբողջությամբ իրականացվել է, իսկ մյուս մասն ընթացքում է: Ներդրումային ծրագրերն ուղղված են արևային էլկտրակայանի կառուցմանը, թռչնաֆաբրիկայի, ջերմոցային տնտեսությունների հիմնմանը, խոզաբուծության, գինեգործության, ադամանդագործության զարգացմանը և այլն:

Ծրագրային առաջարկները հիմնականում վերաբերում են գյուղատնտեսական մթերքի վերամշակմանը, զբոսաշրջության զարգացմանը, անասնապահությանը, մեքենատրակտորային հանգույցների վերանորոգման պահեստամասերի արտադրության, թեթև արդյունաբերության զարգացմանը:

Մարզում 2016-2017թ. գործարկվել են նոր ձեռնարկություններ.

Գործարկվել է Ապարանի ֆերմերային տնտեսությունը, որտեղ իրականացվել է 2 մլն եվրոյի ներդրում, ինչի արդյունքում ստեղծվել է 35 նոր աշխատատեղ, ունի 40 հազար թռչուն և 1000 գլուխ խոզ: Արտադրված հավկիթը իրացվում է տեղական շուկայում, իսկ խոզի մսի իրացումը նախատեսվում է:

Շոկոլադի արտադրությամբ զբաղվող «Գուրմէ Դուրմէ» ընկերությունն կատարել է լրացուցիչ 200 հազար եվրոյի ներդրում, ինչի արդյունքում կստեղծվի 20 նոր աշխատատեղ: Նախատեսվում է արտադրանքն արտահանել ԵԱՏՄ շուկաներ:

«Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ 25 աշխատատեղ, ք. Աշտարակում բացվել է «Էրեբունի-Բայոսիքյուրիթի» ՍՊԸ, որը արտադրում է քիմիական և կենսաքիմիական արտադրանք, շուրջ 9 աշխատատեղով, Սասունիկի «Վան Արդի» ՍՊԸ 20 աշխատատեղ:

«Մետաղի հղկումից և մշակումից պատրաստվող իրերի արտադրություն» ԱՁ, շուրջ 4 աշխատատեղով:

Մարզի Բազմաղբյուր գյուղում բացվել է «Վարգա Ֆուդ» և Կարբի համայնքում «Կարբի Ֆրութ» ՍՊԸ-ները, որոնք զբաղվում են պտուղ-բանջարեղենի վերամշակմամբ, շուրջ 40 աշխատատեղով:

«Դաշտադեմ» արևային ֆոտովոլտային կայանի ներդրումային ծրագիր՝ պահանջվող ներդրումներ՝ 15,980,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի նախապատրաստման նպատակով Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը Ներդրումային ծրագրի շրջանակներում ՀԲ-ի միջոցով հատկացված դրամաշնորհով այժմ իրականացնում է Ծրագրի նախապատրաստման գործընթացը:

Ոսկեվազ համայնքի ջերմոցային տնտեսություն, որտեղ արտադրվում է վարունգ և լոլիկ: Տնտեսությունն ունի 1 հեկտար տարածք, այժմ ընթացքի մեջ է այն ևս 1,2 հեկտարով ընդլայնելու ներդրումային ծրագիրը, որի նպատակով նախատեսվում է ներդնել 800 հազար

դոլարին համարժեք դրամ: Տնտեսության արտադրանքն այժմ իրացվում է միայն տեղական շուկայում, իսկ տնտեսության ընդլայնման պարագայում նախատեսվում է կազմակերպել նաև արտահանում: Բացի ջերմոցային տնտեսությունից՝ ծրագրվում է հիմնել նաև ինտենսիվ այգի և թռչնաբուծարան: Կառավարությունը սուբսիդավորում է ինտենսիվ այգիների հիմնման, կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման ծրագրերը, ինչի արդյունքում գյուղացիական տնտեսությունների համար հնարավորություն է ստեղծվել ներգրավել ցածր տոկոսադրույքներով վարկային միջոցներ:

Ոսկեվազի գինու գործարան՝ վերակառուցման ներդրումային ծրագիր: Այստեղ այժմ ընթացքի մեջ են զբոսաշրջային համալիրի, դեգուստացիոն, ֆորումների համար նախատեսված սրահների կառուցման, արտադրական հզորությունների ավելացման աշխատանքները: Ընդհանուր ներդրումային ծրագիրը գնահատվում է 5-6 մլն դոլար: Ընկերության արտադրանքն Հայաստանից բացի այժմ իրացվում է նաև Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Նիդերլանդներում, Մեծ Բրիտանիայում, Լատվիայում, Էստոնիայում և մի շարք այլ երկրներում:

Օշականի թռնաբուծական ֆաբրիկա՝ արտադրվող թռչնամիսն ու ձուն իրացվում է միայն տեղական շուկայում: Մեկ մլն դոլար արժողությամբ ներդրումային ծրագրի շրջանակում առաջիկայում նախատեսվում է կառուցել 12 նոր թռչնանոց, ինչի արդյունքում ակնկալվում է արտադրվող թռչնամիսն ավելացնել երեք, իսկ ձուն՝ 1,5 անգամ: Ներկայում թռչնաբուծական ֆաբրիկան տարեկան արտադրում է 2 հազար տոննա թռչնամիս և 40 մլն ձու: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ներկայիս 100 աշխատատեղերին կավելանան ևս 100-ը:

Կարբի համայնքում, ինտենսիվ այգու հիմնման ծրագիր՝ 10 հեկտար տարածքի վրա, ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ, արդեն իսկ հիմնվել է խնձորի այգի, իսկ գալիք տարվա ընթացքում նախատեսվում է հիմնել ևս 20 հեկտար տարածքով ծիրանի և կեռասի այգի: Ընդհանուր ներդրումային ծրագիրը գնահատվում է 3 մլն դոլար:

Թալին քաղաքում Հայաստանում ամենամեծ՝ 1ՄՎտ հզորությամբ «Թալին-1» արևային կայան: Այս եզակի նախագիծն իր արտադրական ծավալով ու հնարավորություններով կարևոր նշանակություն ունի Հայաստանի արևային էներգիայի, բնապահպանության և տնտեսական զարգացման ոլորտներում: Նախագիծն իրականացվել է հայաստանցի ներդրողների խմբի (Էդուարդ Մարության, Արայիկ Կարապետյան, Զավեն Սարգսյան, Հայկ Չոբանյան) միջոցներով և «Վերականգնվող էներգիայի աջակցություն» ծրագրի շրջանակում համաֆինանսավորվել է Գերմանահայկական հիմնադրամի և KFW բանկի կողմից:

Ծրագիրն իրականացրել է «Սոլար Փրոդաքշն» ընկերությունը: Էլեկտրակայանի նախագծումն ու շինարարությունը կատարել է «Արփի Սոլար» ընկերությունը:

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանը մեծ ներուժ ունի ալմաստի վերամշակման ոլորտում: Նախատեսվում է «Դայմոտեկ» ՓԲԸ Թալինի մասնաճյուղի ադամանդագործության ռեսուրսների հիման վրա, ընկերությունում աշխատել է շուրջ 500 փորձառու ադամանդամշակման մասնագետ, ապահովել արտադրությունը: Գործարանը 2-3 մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ ալմաստի հումքի ապահովման դեպքում կարող է տարեկան մշակել շուրջ 50 հազար կարատ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստեղծել 200 նոր աշխատատեղ, շուրջ 200-300 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով:

Քննարկման փուլում է գտնվում Ապարանում կարի արտադրամասի և պանրագործարանի հիմնման աշխատանքները: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստեղծել 120 նոր աշխատատեղ, շուրջ 200 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով:

Մարզում խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Հայասի գրուպ» ԲԲԸ, «Թամարա Ֆրուտ» ՓԲԸ, «Աշտարակյան գինիներ» ՓԲԸ, «Գրեյդ Վելլի» ՓԲԸ, «Աշտարակի պոլիգրաֆիական գործարան» ԲԲԸ, «Աշտարակ-ձու» ՓԲԸ, «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ, «Աշտարակ-կաթ» ԲԲԸ, «Գոլդեն գրեյպ Արմաս» ՍՊԸ և «Գնթունիք» ՍՊԸ:

Փոքր և միջին բիզնեսին աջակցելու նպատակով 2017թ.-ի ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 8 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է մոտ 33 մլն դրամ: Ֆինանսական աջակցությունը տրվել է Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի կողմից:

Զբոսաշրջություն

Արագածոտնի մարզում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ: Մարզի զբոսաշրջային ներուժը ներկայացված է Արագածոտնի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հատուկ պահպանվող տարածքներով, մասնավորապես՝ բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով:

Նախատեսվում է նոր աշխատատեղերի ստեղծման, համայնքներում սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացման և տնտեսության արդիականացմանը նպաստելու համար խթանել զբոսաշրջության զարգացումը՝ ներդրումային ծրագրերի իրականացման և ոլորտի մասնավոր կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության և խթանման միջոցով:

Զբոսաշրջության զարգացումը հանդիսանում է մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության գերակա ուղղություն:

Հաշվի առնելով մարզի բնական պոտենցիալը, հարուստ պատմա-մշակույթային ժառանգությունը և վերջին տարիներին տուրիստական հոսքերի աճը, նախատեսում ենք օգտագործողների լայն շերտերի համար նախատեսված կիրառական աշխարհատեղեկատվական համակարգի ստեղծում, որը թուլ կտա լուծել հետևյալ խնդիրները՝

- Մարզի բնական և պատմա-մշակույթային հուշարձանների հաշվառում և քարտեզագրում,
- Մարզի տուրիստական սպասարկող հաստատությունների հաշվառում և քարտեզագրում,
- Հին տուրիստական երթուղիների հաշվառում և քարտեզագրում, նորերի պլանավորում և քարտեզագրում, համապատասխան տպագիր տեղեկատուների պատրաստում,
- Տուրիստական հոսքերի վերլուծություն և պլանավորում

- Ստեղծված գեոտվյալների բազայի հիման վրա ստեղծել մարզի երկլեզու առցանց ինտերակտիվ տուրիստական քարտեզ, որը տեղադրված կլինի կամ մարզպետարանի կայքում, կամ առանձին վեբ հասցեում:

Կայքը հնարավորություն կտա մարզ այցելող զբոսաշրջիկներին ամբողջական ճշգրիտ տեղեկատվություն ստանալ այցելվող տուրիստական օբյեկտի մասին:

Մարզում վերջին տարիներին կառուցվել են Տառեր հուշարձանը, Քրիստոնեության ընդունման Խաչ հուշարձանը, որոնք հանդիսանում են զբոսաշրջիկների կողմից հաճախ այցելվող վայրերից, առաջարկվել է ստեղծել ուխտագնացության նոր ուղի:

Մարզում առկա են 1893 պատմամշակութային հուշարձաններ, որոնցից 1329-ը հանրապետական և 564 տեղական նշանակության:

Մարզում կա 178 եկեղեցի և 56 մատուռ:

Մարզի տարածքում վերջին տարիների կառուցվել են և հաջողությամբ գործում են շուրջ 8 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնք ցրված են մարզի ողջ տարածքով: Զարգացման մեծ հնարավորություն ունի ճանաչողական և ընտանեկան տուրիզմը: Խոշոր հյուրանոցային օբյեկտներից են՝ Աշտարակ քաղաքում «Աշտարակ» հյուրանոցը, Բյուրական համայնքում «Ամբերդ» հյուրանոցը և «Հյուսիսային Աստղ» հյուրանոց-սպորտային-առողջարանական համալիրը, Արագած համայնքում՝ «Արագած» հյուրանոցը, որտեղ ձմեռային տուրիզմի, լեռնագնացության, հանգստի, առողջարարական սպորտի, ալպինիզմի կազմակերպման մեծ հնարավորություններ կան: Մարզը զբոսաշրջիկների ընձեռում է ինչպես ձմեռային հանգստի, այնպես էլ լեռնագնացության, պատմամշակութային տուրիզմի համադրման մեծ հնարավորություններ:

ՀՀ Արագածոտնի մարզն ունի բնակլիմայական առանձնահատուկ պայմաններ՝ բարձր լեռնային եւ նախալեռնային գոտիներ, որոնք նպաստավոր են զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման համար:

Բարձր լեռնային բնակավայրերում, մասնավորապես, Ապարանի կամ Արագածի տարածաշրջանում սպորտային մարզաձևերի, լեռնադահուկային սպորտի զարգացման համար մարզական համալիրի կառուցում: Դա կխթանի զբոսաշրջության զարգացմանը տարածարջանում, որով պայմանավորված՝ կզարգանան ենթակառուցվածքները, կբացվեն աշխատատեղեր:

Մարզում առկա են նախաքրիստոնեական (դոլմեններ, կրոմլեխներ, կիկլոպյան ամրոցներ, վիշապաքարեր) և քրիստոնեական շրջանի (եկեղեցիներ, բերդեր և ամրոցներ, ժողովրդական տներ և այլն) պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններով հարուստ հին բնակավայրեր, որոնք ունեն տուրիզմի զարգացման լայն հնարավորություններ:

Մարզում է գտնվում Հայաստանի ամենաբարձր լեռը՝ Արագածը, որի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 4090 մետր: Կան հանգստյան տների, տուրիստական երթուղիների լայն ցանց:

Բնական տարածքների տուրիստական պոտենցիալի զարգացման համար լայն հնարավորություն է տալիս մարզի տարածքով անցնող Քասաղ գետի առկայությունը՝ իր շրջակա միջավայրով, կիրճերով, բնության գեղատեսիլ վայրերով:

Իրականացվող ծրագրեր

Արագածոտնի 2017-ի առաջին 10 ամիսների ընթացքում իրականացվել են 27 մլրդ 300 մլն դրամի շինարարական աշխատանքներ, որից 9 մլրդ 600 մլն դրամը ներդրվել է հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման ծրագրով, մինչև տարեվերջ այս ցուցանիշը կհասնի 12,5 մլրդ դրամի: Ընդհանուր առմամբ, մարզում 2017-ին նախատեսվում է իրականացնել 30 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի **16-ի N 153–Ն** և 2017 թվականի մայիսի **18-ի N 571-Ն** որոշումներով ՀՀ Արագածոտնի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար հատկացվել է **384.4** մլն դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն սահմանված ժամկետներում: Նշված ծրագրի շրջանակներում տնտեսվել է շուրջ **94** մլն. դրամ:

Համայնքների ընդհանուր եկամուտներ

2017թ.-ի Արագածոտնի մարզի թվով **114** համայնքի բյուջեների ընդհանուր եկամուտը նախատեսվել է **3 733 419.8** հազ. դրամ, իսկ սեփական եկամուտների պլանը նախատեսված է **1 254 321.9** հազ. դրամ կամ ընդհանուր բյուջեի **33.6%**-ը:

2017թ. սեփական եկամուտների պլանը 2016թ.-ի նկատմամբ ավել է նախատեսված **235 138.8** հազ. դրամ կամ աճը կազմում է **23%**:

2017 թ նոյեմբերի 1-ի դրությամբ սեփական եկամուտներ է հավաքագրվել **830 509.7** հազ. դրամ նախատեսված **886 343.1** հազ. դրամի փոխարեն, կամ **10** ամսվա պլանը կատարվել է **93.7%**-ով: 2016թ. նույն ժամանակաշրջանում սեփական եկամուտներ է հավաքագրվել **716 558.0** հազ.դրամ, աճը կազմում է **115.9%**:

Սեփական եկամուտների հավաքագրումը 2017 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է **113951.7** հազ. դրամ (830509.7 – 716558.0) կամ աճը կազմում է **15.9 %**:

2017թ. մարզի 1 շնչին ընկնող սեփական եկամուտները այս առումով կազմում են **9.7** հազ. դրամ (1 254 321.9 : 129.800) իսկ 2016թ. այն կազմել է **6.7** հազ. դրամ:

Չնայած մարզում համայնքների խոշորացման գործընթացները հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում փոքրինչ դանդաղեցրեցին սեփական եկամուտնեի հավաքագրման աշխատանքները, սակայն հույս ունենք, որ մինչև տարեվերջ կմոտենանք 100% պլանի կատարմանը:

Կրթություն

ՀՀ Արագածոտնի մարզում գործում են **122** հանրակրթական ուսումնական հաստատություն (**79**-ը՝ միջնակարգ, **39**-ը՝ հիմնական, **1** հատուկ, **3** ավագ դպրոց, որտեղ սովորում են **17036** աշակերտ: Մարզում գործում են **5** մարզադպրոց, **2** արհեստագործական պետական ուսումնարան և **1** տարածաշրջանային պետական քոլեջ, **5** երաժշտական (Աշտարակ, Արագածավան, Ուջան, Թալին, Օշական), **4** արվեստի (Կոշ, Ապարան, Ոսկեվազ, Արագած), **2** գեղարվեստի (Աշտարակ, Թալին) և **1** պարարվեստի (Աշտարակ) դպրոցներ:

2017-2018 ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական

հաստատություններում ձևավորված **1 243** դասարանում սովորում են **16 459** աշակերտ, միջին խտությունը՝ **13.24**:

Ձևավորվել է **122** առաջին դասարան **1 822** աշակերտով, միջին խտությունը **14.93**:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են **2266** ուսուցիչ: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է **17.66** դասաժամ:

Ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը նախորդ ուստարվա համեմատ բարձրացվել է և կազմել է **1:7.26**-ի:

Մարզային ենթակայության ուսումնական **118** դպրոցից լոկալ ջեռուցմամբ ապահովված են **59**-ը, **26**-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով, իսկ **33**-ը՝ վառարաններով:

Միջին դրույքաչափը **/22 դասաժամ /** մարզում կազմել է մոտ **103000 /** մեկ հարյուր երեք հազար/ դրամ:

43 հանրակրթական դպրոցում գործում է նախակրթարան՝ **562** երեխայով, որտեղ իրականացվում է նախադպրոցական կրթություն՝ կրթական պետական չափորոշիչներին համապատասխան:

Առաջնորդվելով ՀՀ վարչապետի, ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ Արագածոտնի մարզպետի հանձնարարականներով ձեռնարկում ենք միջոցներ՝ հանրապետության սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների ուսում¬նական հաստատություններում մասնագիտական առարկաների դասավանդման համար համապատաս¬խան ուսուցիչներով համալրելու ուղղությամբ: Համագործակցում ենք <<Դասավանդիր Հայաստան>> հիմնադրամի հետ: Այս ուսումնական տարում արդեն համապատասխան ուսուցիչներով համալրվել են Շամիրամի և Ցամաքասարի հիմնական դպրոցները:

2017-2018 ուսումնական տարում ներառական կրթություն իրականացվում է **5**-դպրոցներում՝ **57** աշակերտի համար:

Մարզի **20** հանրակրթական դպրոցներում /**19** եզդիաբնակ համայնքներ/ դպրոցական բաղադրիչի և խմբակների դասաժամերին ուսուցանվում է եզդերեն, իսկ **5** դպրոցներում նաև քրդերեն լեզուն: Աշակերտները, ուսուցիչները ապահովված են համապատասխան ուսումնա-մեթոդական գրականությամբ և դասագրքերով:

Օպտիմալացվող դպրոցների վերաբերյալ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել է առաջարկ Մեծաձորի հիմնական դպրցը լուծարելու մասին:

2017 թվականին առարկայական օլիմպիադաների մարզային փուլին մասնակցել է **518** աշակերտ:

2017 թվականին **925** շրջանավարտից, շարունակական ուսուցում են ստացել հանրապետության ռեյտինգային ԲՈՒՀ-երում **385**-ը, կամ **41.6%**:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգվել են **6**-ը, մասնակի վերանորոգվել են **43**-ը, **37**-ը վերանորոգման խիստ կարիք ունեն:

2017 թվականին կրթության հաստատված բյուջեն կազմել է՝ **4.784** մլրդ դրամ:

Առողջապահություն

Մարզի առողջապահական համակարգում գործում են **21** բուժհաստատություններ՝ որոնցից 5 մարզպետարանի ենթակայության՝ **1 ՊՈԱԿ, 4 ՓԲԸ**\, և համայնքային ենթակայության **1** առողջության կենտրոն, **15** ամբուլատորիաներ \ՀՈԱԿ\:

Մարզում գործում են նաև երեք մասնավոր բժշկական կազմակերպություններ՝ **1** առողջության կենտրոն՝ Նարեկ ԱԿ, **1** ստոմատոլոգիական պոլիկլինիկա՝ ԼԻԼԻԴԵՆՏԻՍ ՍՊԸ և 1 Աննա և Արմենակ Թադէոսյանների բուժարան:

Մարզի ստացիոնար ծառայության մահճակալների թիվը (ներառյալ առողջության կենտրոնի մահճակալների թիվը) **162** է, \2016թ. **200** մահճակալ\:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկների 2017 թվականի գլոբալ բյուջեն կազմում 1 583 106 300 դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով 1 069 372 000 դրամ, հիվանդանոցային ծառայության գծով 513 734 300 դրամ: Այն 2016թ. համեմատ նվազել է 2.4%: Աշխատավարձի ֆոնդը կազմում է մոտ **70.7%:**

2017 թվականի մայիսի 1-ից Արագածոտնի մարզի բժշկական կազմակերպություններում ներդրվել է էլեկտրոնային առողջապահության համակարգը:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ անցկացվում են սքրինինգի ծրագրեր (արգանդի պարանոցի քաղցկեղ, հիպերտոնիա, շաքարային դիաբետ):

World Vision կազմակերպության կողմից իրականացվում են միջոցառումներ «Վաղ մանկության զարգացում» ծրագրի շրջանակներում մարզի Ապարանի և Թալինի տարածաշրջաններում:

ՀՀ Արագածոտնի մարզի առողջապահական համակարգում ավարտին են մոտենում ՀՀ Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 958-Ն որոշմամբ հաստատված օպտիմալացման ծրագրերը:

1.Աշտարակի ԲԿ ՓԲԸ-ում ավարտվել են չափագրման աշխատանքները: Կրճատվել է մահճակալների թիվը 70-ից հասցնելով 45-ի, որի արդյունքում ազատվել է թերծանրաբեռնված N2 մասնաշենքը՝ 1362քմ: Ընթանում է վերոնշյալ մասնաշենքի ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու գործընթացը:

Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2017 թվականի դեկտեմբերի 25-ին:

2.Ծաղկահովիտի ԲԿ ՓԲԸ-ում ավարտվել են չափագրման աշխատանքները: Կրճատվել է մահճակալների թիվը 20-ից հասցնելով 7-ի, որի արդյունքում ազատվել են նախկին ինֆեկցիոն մասնաշենքը՝ 397.1քմ, ինչպես նաև ավտոտնակներ՝ 189քմ, կաթսայատուն 134.4քմ չօգտագործվող և թերծանրաբեռնված տարածքներ: Ընթացքի մեջ է վերոնշյալ տարածքների ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու գործընթացը: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2017 թվականի դեկտեմբերի 18-ին:

3.Լուծարվել է Ուշիի ԱԱՊԿ ՀՈԱԿ-ը և այսուհետ գործելու է որպես Ուշիի ԲՄԿ՝ Կարբիի ԲԱ ՀՈԱԿ-ի կազմում:

Օպտիմալացման աշխատանքների ավարտից հետո ակնկալվում է բժշկական օգնության և ծառայության որակի բարելավում, մատչելիության բարձրացում և ֆինանսական միջոցների խնայում, որը հետագայում կուղղվի վերանորոգումների և նոր սարքավորումների ձեռքբերմանը:

2017 թվականի օգոստոսի 1-ից մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպությունների նախահաշիվներում կատարվել է համապատասխան փոփոխություններ վճարովի ծառայությունների մասով՝ 34 միլիոն դրամով ավելացվել է վճարովի ծառայության գումարի չափը՝ 104 միլիոն դրամից դառնալով 138 միլիոն դրամ:

Մարզային առողջապահական հաստատությունների կողմից 01.11.2017թ.-ի դրությամբ մատուցվել է 90301588 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ: 2018 թվականին նախատեսվում է վճարովի ծառայություններից մուտքերը հասցնել 200 մլն դրամի:

Վարչատարածքային փոփոխություններ

Նոյեմբերի 5-ին ՀՀ Արագածոտնի մարզում կայացած ընտրություններում թվով 46 համայնքներ խոշորացվել են՝ Ապարան, Ալագյազ, Ծաղկահովիտ և Արագածավան համայնքային կենտրոններով: Խոշորացման արդյունքում՝

1. Ապարան համայնքային կենտրոնը ձևավորվել է թվով 21 նախկին համայնքներից, որտեղ աշխատում էին 177 աշխատակիցներ: Այդ համայնքների բնակչության թիվը կազմում է 25895 մարդ: Սեփական եկամուտները կազմում է 185118.5 մլն ՀՀ դրամ: Դոտացիա է հատկացվում 401154.5 ՀՀ դրամ:
2. Ծաղկահովիտ համայնքային կենտրոնը ձևավորվել է թվով 10 նախկին համայնքներից, որտեղ աշխատում էին 106 աշխատակիցներ: Այդ համայնքների բնակչության թիվը կազմում է 11217 մարդ: Սեփական եկամուտները կազմում է 76065.5 մլն ՀՀ դրամ: Դոտացիա է հատկացվում 181250.9 մլն ՀՀ դրամ:
3. Ալագյազ համայնքային կենտրոնը ձևավորվել է թվով 11 նախկին համայնքներից,, որտեղ աշխատում էին 59 աշխատակիցներ: Այդ համայնքների բնակչության թիվը կազմում է 4623 մարդ: Սեփական եկամուտները կազմում է 35809.7 մլն ՀՀ դրամ: Դոտացիա է հատկացվում 68032.9 մլն ՀՀ դրամ:
4. Արագածավան համայնքային կենտրոնը ձևավորվել է թվով 4 նախկին համայնքներից, որտեղ աշխատում էին 49 աշխատակիցներ: Այդ համայնքների բնակչության թիվը կազմում է 10431 մարդ: Սեփական եկամուտները կազմում է 91448.2 մլն ՀՀ դրամ: Դոտացիա է հատկացվում 155028.9 մլն ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ 46 համայնքներում, որտեղ տեղի է ունեցել խոշորացում բնակվում է 52166 մարդ, սեփական եկամուտները կազմում են 388441.5 մլն ՀՀ դրամ, իսկ տրվող դոտացիան կազմում է 805467.2 մլն ՀՀ դրամ: Աշխատողների թիվը 391 մարդ, ՀՈԱԿ-ներում՝ 239 մարդ: Աշխատավարձի ֆոնդը կազմում է ընդհանուր բյուջեի 43 %:

ՀՀ Արագածոտնի մարզում «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների մասին:

ՀՀ Կառավարության կողմից հայտարարված «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017 թվականի ապրիլի 28-ի N104-Ա կարգադրությամբ ստեղծվել է մարզային հանձնաժողով: Վերոնշյալ կարգադրությամբ 2017թ. մայիսի 6-ը հայտարարվել է համամարզային շաբաթօրյակ:

Մայիսի 27-ին և հուլիսի 29-ին կայացած հանրապետական շաբաթօրյակների ընթացքում մարզում իրականացվել են ծավալուն աշխատանքներ: Այդ գործընթացի արդյունքում հայտնաբերված 136 աղբանոցից փակվել է 124-ը, 11-ը հիմնական աղբավայր է, մեկ աղբավայրի փակման և կոնսերվացման աշխատանքներ իրականացնելու համար դիմել ենք ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը՝ ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով:

Մարզի Աշտարակի տարածաշրջանի 17 համայնքի աղբահանություն իրականացնում է «ԷԿՈ-ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն: Հավաքված աղբը տեղադրվում է Սասունիկ համայնքի վարչական տարածքում գտնվող նոր աղբավայրում: Տարածաշրջանի 13 համայնքի հետ առաջիկայում կկնքվեն աղբահանության պայմանագրեր: Մարզի Ապարանի, Թալինի և Ծաղկահովիտի տարածաշրջանների համայնքներում աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանների կողմից և հավաքված աղբը տեղադրվում է իրենց համայնքների վարչական տարածքներում գործող աղբավայրերում:

2017 թ. մարզի համայնքներն աղբահանության նպատակով ծախսել են 62 մլն դրամ, որից 36-ը հավաքագրվել է ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Ակնկալվում է, որ 2018-ին սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 140-145 մլն դրամ: Նշված միջոցները նախատեսվում է հավաքագրել վարձավճարներից և ապահովել ինքնաֆինանսավորում, ինչը համայնքների սեփական բյուջեների վրա լրացուցիչ բեռ չի առաջացնի:

Մարզի Հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներ կարելի է համարել սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային համայնքները:

ՀՀ Արագածոտնի մարզում լեռնային են՝ 23 բնակավայր, բարձր լեռնային՝ 33 բնակավայր, սահմանամերձ՝ 2 բնակավայր, որոնք՝ որպես հատկապես խոցելի համայնքներ, մեր ուշադրության կենտրոնում են:

Անհրաժեշտ օգնություն է ցուցաբերվել մարզի 114 համայնքներին՝ համայնքների զարգացման 5-ամյա ծրագրերի մշակման և ընդունման գործընթացում: Ներկայումս համայնքների հետ վերանայվում են ծրագրերը՝ դրանք ավելի արդյունավետ և իրատեսական դարձնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**